Համաշխարհային տնտեսական համաժողովի
«Համաշխարհային մրցունակության 2011 - 2012 թթ. ինդեքս»

2011թ. սեպտեմբերի 7-ին Համաշխարհային տնտեսական համաժողովը հրապարակել է ***«Համաշխարհային մրցունակություն 2011/2012»*** զեկույցը, որում Հայաստանը աշխարհի 142 երկրների շարքում զբաղեցրել է 92-րդ տեղը՝ նախորդ տարվա 98-րդ տեղի համեմատ[1]:

Երկրների մրցունակության մակարդակը գնահատելու նպատակով Համաժողովի փորձագետները դիտարկում են յուրաքանչյուր երկրի տնտեսության ***տասներկու հիմնասյուների*** (հաստատությունների, ենթակառույցների, մակրոտնտեսական կայունության, առողջապահության և տարրական կրթության, բարձրագույն կրթության և վերապատրաստումների, ապրանքային շուկայի արդյունավետության, աշխատուժի շուկայի արդյունավետության, ֆինանսական շուկայի զարգացվածության, տեխնոլոգիական պատրաստվածության, շուկայի չափի, գործարարության զարգացվածության և նորամուծությունների) մեջ ներառվող շուրջ 113 առանձին ցուցանիշներ:

Նախորդ տարվա համեմատ Հայաստանի մրցունակության 12 հիմնասյուներից բարելավում է գրանցվել 10-ում: Ամենամեծ առաջընթացն արձանագրվել է **տեխնոլոգիական պատրաստվածության** ոլորտում, որտեղ Հայաստանի դիրքը բարելավվել է 20 տեղով: Զգալի բարելավումներ են գրանցվել նաև **ֆինանսական շուկայի զարգացվածության** ոլորտում (15 տեղով), **բարձրագույն կրթության ու վերապատրաստման** ոլորտում (15 տեղով), **հաստատությունների** ոլորտում (14 տեղով), **ենթակառույցների** ոլորտում (13 տեղով), **աշխատուժի շուկայի արդյունավետության** ոլորտում (13 տեղով), **ապրանքային շուկայի արդյունավետության** ոլորտում (5 տեղով), **նորամուծությունների** ոլորտում (4 տեղով): Բարելավումներ են արձանագրվել նաև **գործարարության զարգացվածության** ոլորտում (2 տեղով) և **շուկայի չափի** գործոնի գծով (1 տեղով): Միևնույն ժամանակ վատացում է արձանագրվել **մակրոտնտեսական կայունության** ոլորտում (նախորդ տարվա 99-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 114-րդ տեղը), ինչպես նաև **առողջապահության և առաջնային կրթության** ոլորտում (նախորդ տարվա 93-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 94-րդ տեղը) (տե՛ս աղյուսակ 1):

«Մակրոտնտեսական կայունություն» հիմնասյան գնահատականի էական վատացումը հիմնականում պայմանավորված է 2010թ.-ին **ազգային խնայողություններ/ՀՆԱ** գործակցի նվազմամբ, միջին տարեկան **գնաճի** բարձր մակարդակով, ինչպես նաև վարկավորման և ավանդների ներգրավման միջին **տոկոսադրույքների սպրեդի** խորացմամբ: Մասնավորապես, եթե 2009թ. **ազգային խնայողություններ/ՀՆԱ** ցուցանիշով (23.8%) Հայաստանը աշխարհի 139 երկրների թվում զբաղեցնում էր 49-րդ տեղը, ապա 2010թ.-ի ցուցանիշով (19.6%) աշխարհի 142 երկրների թվում

[1] Աղբյուրը՝ **«Համաշխարհային մրցունակության 2011-2012 զեկույց»**, Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2011թ., էջ 15-22:

գրավում է 76-րդ տեղը: Ինչ վերաբերում է **գնաճի միջին տարեկան** փոփոխությանը, ապա նկատենք, որ 2010թ.-ին Հայաստանի միջին տարեկան գնաճի բարձր՝ 8.2% մակարդակը (2009թ.-ին՝ 3.9%) պայմանավորող հիմնական գործոններից էին միջազգային շուկայում պարենային ապրանքների գների կտրուկ աճը, երկրում գյուղատնտեսության ճյուղի խորը անկումը և ապրիլ ամսից գազի և ջրի սակագների բարձրացումը: 2010թ.-ին Հայաստանում ձևավորված բարձր գնաճային միջավայրի պատճառով Հայաստանի տեղը նախորդ տարվա համեմատ էականորեն վատացել է և ներկայումս զբաղեցնում է 119-րդ տեղը՝ նախորդ տարվա 78-րդ տեղի փոխարեն: Բացի այդ, «Մակրոտնտեսական կայունություն» հիմնասյան գնահատականի վատացման վրա ազդել է նաև վարկավորման և ավանդների **միջին տոկոսադրույքների սպրեդի** չափը, որը նախորդ տարվա համեմատ մի փոքր աճել է (10.1%-ից հասել է 10.4%-ի) և պատճառ է հանդիսացել այդ ցուցանիշի գծով Հայաստանի դիրքի վատացման. նախորդ տարվա 112-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 114-րդ տեղը:

«Առողջապահություն և առաջնային կրթություն» հիմնասյան գնահատականի վատացումը (1 տեղով) պայմանավորված է **ՁԻԱՀ-ի և տուբերկուլյոզի գործարար ծախքերի մեծացման, ինչպես նաև մանկական մահացության** և **առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածության** ցուցանիշներով: Մասնավորապես, **ՁԻԱՀ-ի և տուբերկուլյոզի գործարար ծախքի** գնահատականները, որոնք ստացվում են հարցումների արդյունքում, վատացել են 0.2-ական միավորի չափով, այսինքն՝ հարցվողների մոտ մեծացել է մտավախությունը, որ մոտակա 5 տարիների ընթացքում այդ հիվանդությունները ինչ-որ կերպ կարող են ազդել իրենց գործարար ծախքի վրա: Ինչ վերաբերում է **մանկական մահացության** ցուցանիշին, հարկ ենք համարում նշել, որ չնայած 2008թ.-ի համեմատ 2009թ.-ին Հայաստանում 1000 ծննդի հաշվով մանկական մահացությունը նվազել է 1.1%-ով, այնուամենայնիվ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2011-2012թթ. զեկույցում Հայաստանի դիրքը մանկական մահացության ցուցանիշի գծով վատացել է 1 տեղով: Դա բացատրվում է միայն այն հանգամանքով, որ նշված ժամանակահատվածում որոշ երկրներում այդ ցուցանիշն ավելի արագ է բարելավվել, քան Հայաստանում: Եվ, վերջապես, այս հիմնասյան մեջ ամենամեծ հետընթացը գրանցվել է **առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածության** ցուցանիշի գծով. Հայաստանը զբաղեցնում է 119-րդ տեղը նախորդ տարվա 115-րդ տեղի համեմատ: Այս առումով, նախ, նկատենք, որ նշված երկու տարիներին Հայաստանի տեղի որոշման հիմքում ընկած է 2007թ.-ի 84.1% ընդգրկվածության ցուցանիշը, որը Համաշխարհային մրցունակության փորձագետները վերցրել են Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպության վիճակագրական բազայից, այսինքն՝ այլ հավասար պայմաններում Հայաստանի դիրքը չպիտի փոխվեր: Երկրորդ, կարծում ենք, որ դպրոցներում սովորողների ընդգրկվածության 84.1% ցուցանիշը Հայաստանի դեպքում բավականին ցածր է: Բանն այն է, որ Ադրբեջանի նույն ցուցանիշը կազմում է 96.0% և Վրաստանում՝ 99.6%: Հետևաբար, գտնում ենք, որ այս ցուցանիշը հետագա ճշգրտման կարիք ունի:

Ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի համաշխարհային մրցունակության 2011/2012թթ. ինդեքսի մյուս 10 հիմնասյուների գնահատականները բարելավվել են: Դրանցից դիտարկենք **«Տեխնոլոգիական պատրաստվածություն»** հիմնասյունից հետո իր առաջընթացով երկրորդը հանդիսացող «**Ֆինանսական շուկայի զարգացվածություն»** հիմնասյան առանձին ցուցանիշների գնահատականների փոփոխությունը:

«**Ֆինանսական շուկայի զարգացվածություն**» հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 15 տեղով: Այս հիմնասյան տարրերից ամենամեծ առաջընթացը գրանցվել է **վարկերի մատչելիության** (բարելավում 39 տեղով), **ֆինանսական ծառայությունների մատչելիության** (բարելավում 33 տեղով), **վենչուրային կապիտալի առկայության** (բարելավում 22 տեղով), **ֆինանսական ծառայությունների առկայության** (բարելավում 19 տեղով), **բանկերի սահունության** (բարելավում 12 տեղով), **տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորման** (բարելավում 11 տեղով), **արժեթղթերի շրջանառության կարգավորումների** (բարելավում 11 տեղով) ոլորտներում: Ներկայումս **«Ֆինանսական շուկայի զարգացվածություն»** հիմնասյան իր գնահատականով Հայաստանը գերազանցում է նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Վրաստանին, Մոլդովային, Ղրղզստանին, Ուկրաինային, Տաջիկստանին, Ղազախստանին և Ռուսաստանին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից՝ Սերբիային, Սլովենիային, Ալբանիային և Բոսնիա-Հերցոգովինային: Ֆինանսական շուկայի զարգացվածությամբ Հայաստանը գերազանցում է նաև Իրանին (տե՛ս աղյուսակ 7):

Եթե Հայաստանի դիրքը ներկայացնենք ըստ մրցունակության զեկույցում դիտարկված մյուս հիմնասյուների, ապա կարող ենք փաստել, որ երկրում գործող **հաստատությունների** որակով Հայաստանը նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան երկրների թվում գերազանցում է Չեխիային, Խորվաթիային, Ղազախստանին, Ռումինիային, Սլովակիային, Մոլդովային, Բոսնիա-Հերցեգովինային, Բուլղարիային, Սերբիային, Ռուսաստանին, Ուկրաինային և Ղրղզստանին, իսկ **ենթակառույցների որակով**՝ Ղազախստանին, Սերբիային, Մակեդոնիային, Բուլղարիային, Ռումինիային, Մոլդովային, Բոսնիա-Հերցոգովինային, Տաջիկստանին և Ղրղրզստանին: **Մակրոտնտեսական կայունության** ապահովմամբ, որի գնահատման հիմքում դրվել են Հայաստանի տնտեսության 2010թ. ցուցանիշները, Հայաստանը գերազանցում է Տաջիկստանին, Վրաստանին և Ղրղզստանին: Առողջապահության և առաջնային կրթության ցուցանիշով Հայաստանը գերազանցում է Ղրղզստանին և Ադրբեջանին (տե՛ս աղյուսակ 6):

Բարձրագույն կրթության և վերապատրաստման ոլորտում իր զարգացումներով Հայաստանը նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան երկրների թվում գերազանցում է Մակեդոնիային, Սերբիային, Ալբանիային, Մոլդովային, Բոսնիա-Հերցոգովինային, Վրաստանին, Ղրղզստանին, Տաջիկստանին, ինչպես նաև Իրանին: **Ապրանքային շուկայի արդյունավետությամբ** Հայաստանը գերազանցում է Խորվաթիային, Բոսնիա-

Հերցեգոնիային, Տաջիկստանին, Ղրղզստանին, Ռուսաստանին, Ուկրաինային և Սերբիային: Քանի որ **աշխատուժի շուկայի արդյունավետությամբ** Հայաստանը աշխարհի 142 երկրների թվում զբաղեցնում է բավականին բարձր դիրք՝ 34-րդ տեղը, ներկայացնում ենք այն երկրների թիվը, որոնց զիջում է Հայաստանը: Այդ երկրների թվում են Ադրբեջանը, Էստոնիան, Ղազախստանը և Վրաստանը: **Տեխնոլոգիական պատրաստվածությամբ** Հայաստանը գերազանցում է Վրաստանին, Տաջիկստանին, Ղրղզստանին և Իրանին: Ներքին և արտաքին շուկաների չափով Հայաստանը գերազանցում է Ղրղզստանին, Տաջիկստանին, Մոլդովային և Մոնտենեգրոյին (տե՛ս աղյուսակ 7):

Եվ, վերջապես, ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի գնահատականի, **գործարարության զարգացվածությամբ** Հայաստանը գերազանցում է Բոսնիա-Հերցեգովինային, Ղազախստանին, Վրաստանին, Տաջիկստանին, Ռուսաստանին, Մոլդովային, Ղրղզստանին և Սերբիային, իսկ **նորամուծությունների մակարդակով** Հայաստանը գերազանցում է Ղազախստանին, Վրաստանին, Ալբանիային, Մոլդովային և Ղրղզստանին (տե՛ս աղյուսակ 8):

Հայաստանի տեղը՝ աշխարհի 142 երկրների թվում՝ ըստ դիտարկված 113 ցուցանիշների, ինչպես նաև դրանց բարելավման կամ վատացման դինամիկան ներկայացված են աղյուսակ 2-ում, որը հնարավորություն է տալիս հասկանալու Հայաստանի մրցունակության հիմնասյուների գնահատականների բարելավումը կամ վատացումը պայմանավորող գործոնները:

Ինչ վերաբերում է հարավկովկասյան տարածաշրջանի երկրներին, ապա **համաշխարհային մրցունակության ինդեքսով** երկու երկրներն էլ գերազանցում են Հայաստանին: Ադրբեջանը մրցունակության ինդեքսով զբաղեցնում է 55-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով առաջընթաց 2 մակարդակով, իսկ Վրաստանը զբաղեցնում է 88-րդ տեղը և նախորդ տարվա համեմատ գրանցել է 5 մակարդակով առաջընթաց (տե՛ս աղյուսակ 3): Ինչ վերաբերում է Հայաստանի հարևան մյուս երկրներին՝ Թուրքիային և Իրանին, նշենք, որ Թուրքիան զբաղեցնում է 59-րդ, իսկ Իրանը՝ 62-րդ տեղը:

Համաշխարհային մրցունակության ինդեքսով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանին զիջում են Սերբիան (95-րդ տեղ) և Բոսնիա-Հերցեգովինան (10-րդ տեղ), իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Մոլդովան (93-րդ տեղը), Տաջիկստանը (105-րդ տեղը) ու Ղրղզստանը (126-րդ տեղը):

«Համաշխարհային մրցունակություն 2011/2012» զեկույցում մրցունակ երկրների առաջին տասնյակում են Շվեյցարիան, Սինգապուրը, Շվեդիան, Ֆինլանդիան, ԱՄՆ-ը, Գերմանիան, Նիդեռլանդները, Դանիան, Ճապոնիան և Միացյալ Թագավորությունը, իսկ վերջին տասնյակում՝ Մոզամբիկը, Սվազիլենդը, Լեսոտոն, Բուրկինա Ֆասոն, Մավրիտանիան, Եմենը, Անգոլան, Բուրունդին, Հայիթին և Չադը:

Հայաստանի համաշխարհային մրցունակության 2011-2012թթ. ինդեքսը և առանձին հիմնասյուների ենթաինդեքսները, դրանց 2007-2011թթ. դինամիկան, Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը, ինչպես նաև հարավկովկասյան և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Թուրքիայի և Իրանի ինդեքսների համեմատական բնութագիրը ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

Հայաստանի համաշխարհային մրցունակության գնահատականները ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի

Աղյուսակ 1

	Ինդեքսի անվանումը	2011-2012 թթ. երկրի դիրքը (աշխարհի 142 երկրների շարքում)[2]	2010-2011 թթ. երկրի դիրքը (աշխարհի 139 երկրների շարքում)[3]	2009-2010 թթ. երկրի դիրքը (աշխարհի 133 երկրների շարքում) [4]	2008-2009 թթ. երկրի դիրքը (աշխարհի 134 երկրների շարքում)	2007-2008 թթ. երկրի դիրքը (աշխարհի 131 երկրների շարքում)
	Համաշխարհային մրցունակության ինդեքս	**92**	**98**[5]	**97**	**97**	**93**
1.	Հաստատություններ	83	97	95	96	96
2.	Ենթակառույցներ	77	90	81	90	87
3.	Մակրոտնտեսական կայունություն	114	99	53	83	57
4.	Առողջապահություն և առաջնային կրթություն	94	93	97	97	99
5.	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	76	91	96	94	95
6.	Ապրանքային շուկայի արդյունավետություն	108	113	116	110	104
7.	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	34	47	47	45	40
8.	Ֆինանսական շուկայի զարգացածություն	95	110	97	107	110
9.	Տեխնոլոգիական պատրաստվածություն	88	108	105	112	104
10.	Շուկայի չափը	115	116	109	111	111
11.	Գործարարության զարգացվածությունը	107	109	112	120	115
12.	Նորամուծություններ	112	116	108	106	94

2 2011/2012թթ. հետազոտության մեջ ավելացել են 3 նոր երկիր՝ Բելիզը, Հաիթին և Եմենը: Բացի այդ, Սուրինամը, որը գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով 2010/2011թթ.հետազոտությունից դուրս էր մնացել, 2011/2012թթ. հետազոտության մեջ նորից ներգրավվել է, իսկ Լիբիան դուրս է մնացել գնահատումից՝ երկրում սոցիալական անհանգստությունների պատճառով հարցումներ իրականացնելու անհնարինության պատճառով:

3 2010/2011թթ. հետազոտության մեջ ավելացել են 7 երկիր՝ Անգոլան, Կապե Վերդեն, Ռուանդան, Սվազիլանդը, Իրանը, Լիբանանը և Մոլդովան և դուրս է եկել Սուրինամը՝ գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով:

4 Ի տարբերություն նախորդ տարվա՝ Մոլդովան չի ներառվել դիտարկվող երկրների թվում:

5 Եթե Հայաստանի 2010/2011թթ. մրցունակության գնահատականը դիտարկում ենք 2009/2010թթ. հետազոտության մեջ ընդգրկված 133 երկրների թվում, Հայաստանը զբաղեցնում է 94-րդ տեղը:

Հայաստանի համաշխարհային մրցունակության գնահատականները ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի

Աղյուսակ 2

	Ինդեքսի անվանումը	2011-20112 թթ. երկրի դիրքը աշխարհի 142 երկրների շարքում	2010-2011 թթ. երկրի դիրքը աշխարհի 139 երկրների շարքում	2009-2010 թթ. երկրի դիրքը աշխարհի 133 երկրների շարքում	2008-2009 թթ. երկրի դիրքը աշխարհի 134 երկրների շարքում	2007-2008 թթ. երկրի դիրքը աշխարհի 131 երկրների շարքում
1	**Հաստատությունների ինդեքս**	**83**	**97**	**95**	**96**	**96**
1.01	Մասնավոր սեփականության իրավունքը	95	98	79	69	69
1.02	Մտավոր սեփականության պաշտպանվածությունը	96	107	107	108	107
1.03	Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը	91	103	104	110	106
1.04	Քաղաքական գործիչների նկատմամբ հանրության վստահությունը	83	89	92	104	108
1.05	Անօրինական վճարներ և կաշառակերություն	97	104			
1.06	Դատական համակարգի անկախությունը	108	118	122	123	120
1.07	Պետական այրերի վճիռների վրա «հովանավորչության» ազդեցությունը	78	78	82	94	110
1.08	Կառավարության ծախսումների շռայլումը	48	54	54	77	87
1.09	Կառավարության կարգավորման բեռը	52	91	64	71	77
1.10	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում	81	104	111		
1.11	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում	84	103	98	97	104
1.12	Կառավարության քաղաքականության թափանցիկությունը	35	53	65	103	104
1.13	Ահաբեկչության գործարար ծախքը	17	32	26	33	40
1.14	Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը	25	31	23	32	35
1.15	Կազմակերպված հանցագործությունը	61	66	69	67	57
1.16	Ոստիկանական ծառայության հուսալիությունը	105	112	104	95	92
1.17	Ընկերությունների բարոյական վարքագիծը	106	118	115	115	111
1.18	Աուդիտի և հաշվետվական ստանդարտների կիրառման տարածվածությունը	87	101	92	97	99
1.19	Կորպորատիվ խորհուրդների ուժը	115	130	123	123	113
1.20	Փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը	120	131	123	124	117
1.21	Ներդրողների պաշտպանվածությունը	77	77	71	67	65
2	**Ենթակառույցների ինդեքս**	**77**	**90**	**81**	**90**	**87**

2.01	Ընդհանուր ենթակառույցների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	77	76	78	91	84
2.02	Ճանապարհների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	92	87	72	79	75
2.03	Երկաթուղային ենթակառույցի որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	69	79	82	83	84
2.04	Նավահանգստային ենթակառույցի որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	132	128	117	115	104
2.05	Օդային տրանսպորտի ենթակառույցի որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	74	77	74	85	88
2.06	Թռիչքային կիլոմետրը 1 շնչի հաշվով (2011 թ. հունվար և հուլիս ամիսների միջինը)	98	100	100	99	97
2.07	Էլեկտրականության մատակարարման որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	71	78	82	89	90
2.08	Հեռախոսային գծերը (100 մարդու հաշվով), 2010 թ.	69	64	66	65	62
2.09	Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2010 թ.	33	81	93	123	109
3	**Մակրոտնտեսական կայունություն**	**114**	**99**	**53**	**83**	**57**
3.01	Պետբյուջեի հավելուրդը/պակասուրդը ՀՆԱ-ում, %, 2010 թ.	92	113	66	103	96
3.02	Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում, %, 2010 թ.	76	49	36	38	52
3.03	Գնաճի միջին տարեկան փոփոխությունը, %, 2010 թ.	119	78	75	61	39
3.04	Վարկավորման և ավանդների ներգրավման միջին տոկոսադրույքների սպրեդը, 2010 թ.	114	112	106	117	105
3.05	Պետական պարտքը ՀՆԱ-ում, %, 2010 թ.	68	70	19	26	32
3.06	Երկրի սուվերեն վարկանիշ, 2011թ. մարտի դրությամբ	86	86	--	--	--
4	**Առողջապահություն և առաջնային կրթություն**	**94**	**93**	**97**	**97**	**99**
4.01	Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա (2010 -2011թթ.կշռված միջինը)	1	1	1	67	80
4.02	Մալարիայի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2006 թ.	1	1	1	67	67
4.03	Տուբերկուլյոզի ազդեցությունը գործարարության վրա (2010 -2011թթ.կշռված միջինը)	86	84	48	69	88
4.04	Տուբերկուլյոզի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2009թ.	82	80	79	75	76
4.05	ՁԻԱՀ-ի գործարար ծախքը (2010 -2011թթ.կշռված միջինը)	64	55	34	49	59
4.06	ՁԻԱՀ-ի կանխումը, 2009 թ.	21	22	15	23	25
4.07	Մանկական մահացությունը (1000 ծննդի հաշվով), 2009թ.	83	82	75	84	86
4.08	Կյանքի սպասվող տևողություն (2009թ.)	64	65	88	87	85
4.09	Առաջնային կրթության (դպրոցների) որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	88	88	81	82	85
4.10	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2008 թ.	119	115	108	109	109
5	**Բարձրագույն կրթություն և վերապատրաստում**	**76**	**91**	**96**	**94**	**95**
5.01	Երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2008թ.	52	69	62	57	59
5.02	Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը, 2008թ.	49	68	65	65	70
5.03	Կրթության համակարգի որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	97	115	105	98	94
5.04	Մաթեմատիկական և գիտական կրթության որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	81	74	73	76	65
5.05	Կառավարման դպրոցների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	131	130	125	124	121
5.06	Ինտերնետի հնարավորությունը դպրոցներում (2010 -2011թթ.կշռված միջինը)	92	107	101	103	107

5.07	Տեղական մասնագիտացված գիտահետազոտական և ուսումնական ծառայությունների մատչելիությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	114	124	120	125	111
5.08	Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	105	116	114	117	114
6	**Ապրանքային շուկայի արդյունավետությունը**	**108**	**113**	**116**	**110**	**104**
6.01	Տեղական մրցակցության ինտենսիվությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	139	136	128	132	124
6.02	Շուկայի գերիշխանությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	133	133	129	133	131
6.03	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	138	138	132	132	130
6.04	Հարկավորման չափը և ազդեցությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	65	84	86	84	72
6.05	Հարկավորման ընդհանուր դրույքաչափը, 2010թ.	74	56	52	42	52
6.06	Գործարարություն հիմնելու գործընթացների քանակը, 2010թ.	34	34	75	58	52
6.07	Գործարարություն սկսելու համար պահանջվող ժամանակը, 2010թ.	63	56	53	38	39
6.08	Գյուղատնտեսական քաղաքականության ծախքերը (2010 -2011թթ.կշռված միջինը)	47	41	26	30	51
6.09	Առևտրային խոչընդոտների գերակայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	96	100	97	104	89
6.10	Առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքը – Մաքսային դրույքի բեռը, 2010թ.	34	35	119	41	5
6.11	Օտարերկրյա փայամասնակցության սահմանափակումները (2010 -2011թթ.կշռված միջինը)	106	111	95	84	76
6.12	Օտարերկրյա ներդրումների կանոնակարգման ազդեցությունը գործարարություն վրա (2010 -2011թթ.կշռված միջինը)	95	102	89	87	77
6.13	Մաքսային գործընթացների բեռը (2010 -2011թթ.կշռված միջինը)	132	138	131	122	121
6.14	Ներմուծումը ՀՆԱ-ում, %, 2010 թ.	58	-	-	-	-
6.15	Սպառողների կողմնորոշման աստիճանը (2010 -2011թթ.կշռված միջինը)	113	134	124	108	102
6.16	Գնորդների զարգացածությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	74	75	83	88	94
7	**Աշխատուժի շուկայի արդյունավետությունը**	**34**	**47**	**47**	**45**	**40**
7.01	Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում (2010 -2011թթ.կշռված միջինը)	44	53	45	58	54
7.02	Աշխատավարձի սահմանման ճկունությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	43	63	46	34	36
7.03	Զբաղվածության կոշտությունը, 2009թ.	52	50	58	51	42
7.04	Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները (2010 -2011թթ.կշռված միջինը)	18	33	22	16	40
7.05	Աշխատանքից ազատման ծախքերը (հասանելիք աշխատավարձի շաբաթներով), 2009թ.	21	21	19	19	17
7.06	Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը (2010 -2011թթ.կշռված միջինը)	41	63	52	47	50
7.07	Մասնագիտական մենեջմենթի հուսալիությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	107	117	115	125	127
7.08	Ուղեղների արտահոսքը (2010 -2011թթ.կշռված միջինը)	103	97	107	106	99
7.09	Աշխատուժի մեջ կանանց մասնակցությունը, 2009թ.	51	41	36	41	38

8	**Ֆինանսական շուկայի զարգացածությունը**	**95**	**110**	**97**	**107**	**110**
8.01	Ֆինանսական ծառայությունների առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	102	121	103	107	112
8.02	Ֆինանսական ծառայությունների մատչելիություն (2010 -2011թթ.կշռված միջինը)	71	104			
8.03	Տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորումը (2010 -2011թթ.կշռված միջինը)	120	131	112	112	119
8.04	Վարկերի մատչելիությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	85	124	119	120	123
8.05	Վենչուրային կապիտալի առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	109	131	129	130	124
	Կապիտալ հոսքերի սահմանափակումները (2010 -2011թթ.կշռված միջինը)	-	57	57	60	63
8.06	Բանկերի սահունությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	69	81	81	88	90
8.07	Արժեթղթերի շրջանառության կարգավորումները (2010 -2011թթ.կշռված միջինը)	110	121	118	119	121
8.08	Օրենսդրական իրավունքների ինդեքսը, 2010թ.	60	60	36	52	47
9	**Տեխնոլոգիական պատրաստվածությունը**	**88**	**108**	**105**	**112**	**104**
9.01	Նորագույն տեխնոլոգիաների առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	116	127	115	116	113
9.02	Ֆիրմաների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացումը (2010 -2011թթ.կշռված միջինը)	114	121	105	109	81
9.03	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցում (2010 -2011թթ.կշռված միջինը)	77	79	85	92	83
9.04	Ինտերնետից օգտվողների քանակը (100 մարդու հաշվով), 2010 թ.	68	111	109	102	97
9.05	Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2010 թ.	86	108	86	102	99
9.06	Միջազգային ինտերնետի արագությունը (կբ/վայրկյան)-2010թ.	72	73	--	--	--
10	**Շուկայի չափը**	**115**	**116**	**109**	**111**	**111**
10.01	Ներքին շուկայի չափը (ՀՆԱ+ներմուծում-արտահանում), 2010թ.	110	111	104	106	108
10.02	Արտաքին շուկայի չափը (Արտահանման արժեքը), 2010թ.	127	129	125	125	120
10.03	ՀՆԱ (գնողունակության համարժեքությամբ), 2010թ.	117	--	--	--	--
10.04	Արտահանման տես.կշիռը ՀՆԱ-ում, %, 2010թ.	129	--	--	--	--
11	**Գործարարության զարգացածությունը**	**107**	**109**	**112**	**120**	**115**
11.01	Տեղական արտադրողների քանակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	111	110	112	114	110
11.02	Տեղական արտադրողների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	113	116	112	111	114
11.03	Կլաստերների զարգացման վիճակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	108	124	122	130	118
11.04	Մրցակցային առավելության բնույթը (2010 -2011թթ.կշռված միջինը)	54	39	41	60	57
11.05	Արտահանող ընկերությունների ներգրավվածությունը բարձր ավելացված արժեքի ստեղծմանը (2010 -2011թթ.կշռված միջինը)	121	121	103	94	82

11.06	Միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	102	110	113	122	121
11.07	Արտադրական գործընթացի կատարելագործվածությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	87	100	99	103	98
11.08	Մարքեթինգի մակարդակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	116	119	118	123	123
11.09	Իրավասությունները լիազորելու պատրաստակամությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	113	128	126	123	123
12	**Նորամուծություններ**	**112**	**116**	**108**	**106**	**94**
12.01	Նորամուծությունների ունակությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	61	65	66	68	72
12.02	Գիտահետազոտական ինստիտուտների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	107	103	98	101	83
12.03	Հետազոտությունների և զարգացման (R&D) վրա ընկերությունների ծախսերը (2010 - 2011թթ.կշռված միջինը)	117	127	115	96	110
12.04	Համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցություն (2010 - 2011թթ.կշռված միջինը)	125	124	114	116	104
12.05	Տեխնոլոգիական արտադրանքի պետական գնումները (2010 -2011թթ.կշռված միջինը)	124	134	124	122	111
12.06	Գիտնականների և ինժեներների առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	87	93	91	80	58
12.07	Պատենտների քանակը (2010 թ., 1 մլն մարդու հաշվով)	64	90	69	63	54

Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը՝ ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2011-2012թթ. գնահատականների (աշխարհի 142 երկրների շարքում)

Աղյուսակ 3

Առավելությունները	Տեղը	Թույլ կողմերը	Տեղը
Հաստատություններ - 83			
Ահաբեկչության գործարար ծախքը	17	Փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը	120
Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը	25	Կորպորատիվ խորհուրդների ուժը	115
Կառավարության քաղաքականության թափանցիկությունը	35	Դատական համակարգի անկախությունը	108
Կառավարության ծախսումների շռայլումը	48	Ընկերությունների բարոյական վարքագիծը	106
		Ոստիկանական ծառայության հուսալիությունը	105
		Անօրինական վճարներ և կաշառակերություն	97
		Մտավոր սեփականության պաշտպանվածությունը	96
		Մասնավոր սեփականության իրավունքը	95
		Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը	91
		Աուդիտի և հաշվետվական ստանդարտների կիրառման տարածվածությունը	87
		Քաղաքական գործիչների նկատմամբ հանրության վստահությունը	83
		Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում	84
		Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում	81
		Պետական այրերի վճիռների վրա «հովանավորչության» ազդեցությունը	78
		Ներդրողների պաշտպանվածությունը	77
		Կազմակերպված հանցագործությունը	61
		Կառավարության կարգավորման բեռը	52
Ենթակառույցներ - 77			
		Նավահանգստային ենթակառույցի որակը	132
		Թռիչքային կիլոմետրը 1 շնչի հաշվով	98
		Ճանապարհների որակը	92
		Ընդհանուր ենթակառույցների որակը	77
		Օդային տրանսպորտի ենթակառույցի որակը	74

		Էլեկտրականության մատակարարման որակը	71
		Երկաթուղային ենթակառույցի որակը	69
		Հեռախոսային գծերը (100 մարդու հաշվով)	69
		Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով)	33
Մակրոտնտեսական կայունություն - 114			
		Գնաճի միջին տարեկան փոփոխությունը, %, 2010 թ.	119
		Վարկավորման և ավանդների ներգրավման միջին տոկոսադրույքների սպրեդը, 2010 թ.	114
		Պետբյուջեի հավելուրդը/պակասուրդը ՀՆԱ-ում, %, 2010 թ.	92
		Երկրի սուվերեն վարկանիշ, 2011թ. մարտի դրությամբ	86
		Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում, %, 2010 թ.	76
		Պետական պարտքը ՀՆԱ-ում, %, 2010 թ.	68
Առողջապահություն և առաջնային կրթություն - 93			
Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա (2010 - 2011թթ.կշռված միջինը)	1	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2008 թ.	119
Մալարիայի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2006թ.	1	Առաջնային կրթության (դպրոցների) որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	88
ՁԻՄՀ-ի կանխումը, 2009 թ.	21	Տուբերկուլյոզի ազդեցությունը գործարարության վրա (2010 - 2011թթ.կշռված միջինը)	86
		Մանկական մահացությունը (1000 ծննդի հաշվով), 2009թ.	83
		Տուբերկուլյոզի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2009թ.	82
		ՁԻՄՀ-ի գործարար ծախքը (2010 -2011թթ.կշռված միջինը)	64
		Կյանքի սպասվող տևողություն (2009թ.)	64
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում - 76			
Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը, 2008թ.	49	Կառավարման դպրոցների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	131
		Տեղական մասնագիտացված գիտահետազոտական և ուսումնական ծառայությունների մատչելիությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	114
		Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	105
		Կրթության համակարգի որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	97
		Ինտերնետի հնարավորությունը դպրոցներում (2010 -2011թթ.կշռված միջինը)	92
		Մաթեմատիկական և գիտական կրթության որակը (2010 - 2011թթ.կշռված միջինը)	81
		Երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների	52

		ընդգրկվածությունը, 2008թ.	
Ապրանքային շուկայի արդյունավետությունը - 108			
Գործարարություն հիմնելու գործընթացների քանակը, 2010թ.	34	Տեղական մրցակցության ինտենսիվությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	139
Առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքը – Մաքսային դրույքի բեռը, 2010թ.	34	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	138
Գյուղատնտեսական քաղաքականության ծախքերը (2010 - 2011թթ.կշռված միջինը)	47	Շուկայի գերիշխանությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	133
		Մաքսային գործընթացների բեռը (2010 -2011թթ.կշռված միջինը)	132
		Սպառողների կողմնորոշման աստիճանը (2010 -2011թթ.կշռված միջինը)	113
		Օտարերկրյա փայամասնակցության սահմանափակումները (2010 - 2011թթ.կշռված միջինը)	106
		Առևտրային խոչընդոտների գերակայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	96
		Օտարերկրյա ներդրումների կանոնակարգման ազդեցությունը գործարարություն վրա (2010 -2011թթ.կշռված միջինը)	95
		Հարկավորման ընդհանուր դրույքաչափը, 2010թ.	74
		Գնորդների զարգացածությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	74
		Հարկավորման չափը և ազդեցությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	65
		Գործարարություն սկսելու համար պահանջվող ժամանակը, 2010թ.	63
		Ներմուծումը ՀՆԱ-ում, %, 2010 թ.	58
Աշխատուժի շուկայի արդյունավետությունը - 34			
Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները (2010 - 2011թթ.կշռված միջինը)	18	Մասնագիտական մենեջմենթի հուսալիությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	107
Աշխատանքից ազատման ծախքերը (հասանելիք աշխատավարձի շաբաթներով), 2009թ.	21	Ուղեղների արտահոսքը (2010 -2011թթ.կշռված միջինը)	103
Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը (2010 -2011թթ.կշռված միջինը)	41	Զբաղվածության կոշտությունը, 2009թ.	52
Աշխատավարձի սահմանման ճկունությունը (2010 - 2011թթ.կշռված միջինը)	43	Աշխատուժի մեջ կանանց մասնակցությունը, 2009թ.	51
Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում (2010 -2011թթ.կշռված միջինը)	44		
Ֆինանսական շուկայի զարգացածությունը – 95			
		Տեղական արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորումը (2010 - 2011թթ.կշռված միջինը)	120
		Արժեթղթերի շրջանառության կարգավորումները (2010 -2011թթ.կշռված միջինը)	110

		Վենչուրային կապիտալի առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	109
		Ֆինանսական ծառայությունների առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	102
		Վարկերի մատչելիությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	85
		Ֆինանսական ծառայությունների մատչելիություն (2010 -2011թթ.կշռված միջինը)	71
		Բանկերի սահունությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	69
		Օրենսդրական իրավունքների ինդեքսը, 2010թ.	60
Տեխնոլոգիական պատրաստվածությունը - 88			
		Նորագույն տեխնոլոգիաների առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	116
		Ֆիրմաների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացումը (2010 -2011թթ.կշռված միջինը)	114
		Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2010 թ.	86
		Օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցում (2010 -2011թթ.կշռված միջինը)	77
		Միջազգային ինտերնետի արագությունը (կբ/վայրկյան)-2010թ.	72
		Ինտերնետից օգտվողների քանակը (100 մարդու հաշվով), 2010 թ.	68
Շուկայի չափը - 115			
		Արտահանման տես.կշիռը ՀՆԱ-ում, %, 2010թ.	129
		Արտաքին շուկայի չափը (Արտահանման արժեքը), 2010թ.	127
		ՀՆԱ (հաշվարկված գնողունակության համարժեքությամբ), 2010թ.	117
		Ներքին շուկայի չափը (ՀՆԱ+ներմուծում-արտահանում), 2010թ.	110
Գործարարության զարգացածությունը - 107			
		Արտահանող ընկերությունների ներգրավվածությունը բարձր ավելացված արժեքի ստեղծմանը (2010 -2011թթ.կշռված միջինը)	121
		Մարքեթինգի մակարդակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	116
		Տեղական արտադրողների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	113
		Իրավասությունները լիազորելու պատրաստակամությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	113
		Տեղական արտադրողների քանակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	111
		Կլաստերների զարգացման վիճակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	108

		Միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողությունը (2010 - 2011թթ.կշռված միջինը)	102
		Արտադրական գործընթացի կատարելագործվածությունը (2010 - 2011թթ.կշռված միջինը)	87
		Մրցակցային առավելության բնույթը (2010 -2011թթ.կշռված միջինը)	54
Նորամուծություններ - 112			
		Համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցություն (2010 -2011թթ.կշռված միջինը)	125
		Տեխնոլոգիական արտադրանքի պետական գնումները (2010 - 2011թթ.կշռված միջինը)	124
		Հետազոտությունների և զարգացման (R&D) վրա ընկերությունների ծախսերը (2010 -2011թթ.կշռված միջինը)	117
		Գիտահետազոտական ինստիտուտների որակը (2010 -2011թթ.կշռված միջինը)	107
		Գիտնականների և ինժեներների առկայությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	87
		Պատենտների քանակը (2010 թ., 1 մլն մարդու հաշվով)	64
		Նորամուծությունների ունակությունը (2010 -2011թթ.կշռված միջինը)	61

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների համաշխարհային մրցունակության գնահատականները 2011/2012թթ.[6], 2010/2011 թթ.[7] և 2009/2010թթ.[8], ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի

Աղյուսակ 4

	Ինդեքսի անվանումը	Հայաստան			Վրաստան			Ադրբեջան		
		2011-2012	2010-2011	2009-2010	2011-2012	2010-2011	2009-2010	2011-2012	2010-2011	2009-2010
	Համաշխարհային մրցունակության ինդեքս	**92**	**98**	**97**	**88**	**93**	**90**	**55**	**57**	**51**
1.	Հաստատություններ	83	97	95	60	69	72	68	71	55
2.	Ենթակառույցներ	77	90	81	68	73	72	73	76	58
3.	Մակրոտնտեսական կայունություն	114	99	53	137	130	117	16	12	27
4.	Առողջապահություն և առաջնային կրթություն	94	93	97	67	73	78	105	83	96
5.	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	76	91	96	88	90	84	75	77	72
6.	Ապրանքային շուկայի արդյունավետություն	108	113	116	74	64	74	79	93	71
7.	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	34	47	47	32	31	17	14	25	13
8.	Ֆինանսական շուկայի զարգացածություն	95	110	97	99	108	95	94	71	66
9.	Տեխնոլոգիական պատրաստվածություն	88	108	105	100	98	100	74	70	75
10.	Շուկայի չափը	115	116	109	106	107	101	75	76	78
11.	Գործարարության զարգացվածությունը	107	109	112	110	111	113	73	72	74
12.	Նորամուծություններ	112	116	108	118	125	119	60	61	42

[6] *Երկրի փեղը աշխարհի 142 երկրների շարքում:*
[7] *Երկրի փեղը աշխարհի 139 երկրների շարքում:*
[8] *Երկրի փեղը աշխարհի 133 երկրների շարքում:*

Նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների համաշխարհային մրցունակության և դրա առանձին փուլերի ինդեքսները
ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի

Աղյուսակ 5.

Երկրներ	Համաշխարհային մրցունակության 2011-2012թթ. ինդեքս	I-ին փուլ -- Առաջնային պահանջներ	II փուլ-- Արդյունավետության խթանիչներ	III փուլ-- Նորամուծություններ և կատարելագործման խթանիչներ
Էստոնիա	33	27	36	37
Չեխիա	38	45	29	32
Լեհաստան	41	56	30	57
Լիտվա	44	49	48	50
Հունգարիա	48	55	42	52
Ադրբեջան	55	59	77	67
Սլովենիա	57	39	51	45
Թուրքիա	59	64	52	58
Մոնտենեգրո	60	57	63	59
Իրան	62	51	88	83
Լատվիա	64	66	54	64
Ռուսաստան	66	63	55	97
Սլովակիա	69	60	44	71
Ղազախստան	72	62	76	114
Բուղարիա	74	74	59	96
Խորվաթիա	76	52	72	82
Ռումինիա	77	89	62	99
Ալբանիա	78	71	82	102
Մակեդոնիա	79	69	87	104
Ուկրաինա	82	98	74	93
Վրաստան	88	86	89	117
Հայաստան	**92**	**94**	**91**	**110**
Մոլդովա	93	102	103	127
Սերբիա	95	88	90	118
Բոսնիա-Հերց.	100	92	102	108
Տաջիկստան	105	106	118	100
Ղրղզստան	126	131	115	138

Հայաստանի համաշխարհային մրցունակության առաջին՝ «Առաջնային պահանջներ» փուլի գնահատականները ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի, 2011-2012թթ. ինդեքս

Աղյուսակ 6.

Երկրներ	Առաջնային պահանջներ
Էստոնիա	27
Սլովենիա	39
Չեխիա	45
Լիտվա	49
Իրան	51
Խորվաթիա	52
Հունգարիա	55
Լեհաստան	56
Մոնտենեգրո	57
Ադրբեջան	59
Սլովակիա	60
Ղազախստան	62
Ռուսաստան	63
Թուրքիա	64
Լատվիա	66
Մակեդոնիա	69
Ալբանիա	71
Բուլղարիա	74
Վրաստան	86
Սերբիա	88
Ռումինիա	89
Բոսնիա-Հերց.	92
Հայաստան	**94**
Ուկրաինա	98
Մոլդովա	102
Տաջիկստան	106
Ղրղզստան	131

Երկրներ	Հաստատություններ
Էստոնիա	29
Մոնտենեգրո	42
Լեհաստան	52
Սլովենիա	55
Ալբանիա	57
Վրաստան	60
Լիտվա	62
Տաջիկստան	63
Լատվիա	66
Ադրբեջան	68
Իրան	72
Հունգարիա	73
Թուրքիա	80
Մակեդոնիա	81
Հայաստան	**83**
Չեխիա	84
Խորվաթիա	90
Ղազախստան	94
Ռումինիա	99
Սլովակիա	101
Մոլդովա	106
Բոսնիա-Հերց.	109
Բուլղարիա	110
Սերբիա	121
Ռուսաստան	128
Ուկրաինա	131
Ղրղզստան	136

Երկրներ	Ենթակառույցներ
Չեխիա	36
Սլովենիա	37
Խորվաթիա	39
Էստոնիա	40
Լիտվա	43
Հունգարիա	46
Ռուսաստան	48
Թուրքիա	51
Սլովակիա	57
Լատվիա	61
Մոնտենեգրո	63
Իրան	67
Վրաստան	68
Ուկրաինա	71
Ալբանիա	72
Ադրբեջան	73
Լեհաստան	74
Հայաստան	**77**
Ղազախստան	82
Սերբիա	84
Մակեդոնիա	86
Բուլղարիա	87
Ռումինիա	95
Մոլդովա	96
Բոսնիա-Հերց.	99
Տաջիկստան	111
Ղրղզստան	114

Երկրներ	Մակրոտնտեսական կայունություն
Ադրբեջան	16
Ղազախստան	18
Էստոնիա	21
Իրան	27
Սլովենիա	35
Մակեդոնիա	37
Չեխիա	43
Ռուսաստան	44
Բուլղարիա	46
Սլովակիա	56
Հունգարիա	67
Թուրքիա	69
Խորվաթիա	70
Լիտվա	73
Լեհաստան	74
Բոսնիա-Հերց.	78
Ալբանիա	86
Ռումինիա	87
Սերբիա	91
Լատվիա	93
Մոնտենեգրո	94
Մոլդովա	103
Ուկրաինա	112
Հայաստան	**114**
Տաջիկստան	120
Վրաստան	137
Ղրղզստան	141

Երկրներ	Առողջապահություն,առաջնային կրթություն
Սլովենիա	24
Էստոնիա	26
Լեհաստան	40
Սլովակիա	43
Լիտվա	46
Խորվաթիա	48
Լատվիա	49
Իրան	50
Չեխիա	51
Սերբիա	52
Հունգարիա	54
Բուլղարիա	57
Բոսնիա-Հերց.	58
Մոնտենեգրո	59
Ալբանիա	65
Ռումինիա	66
Վրաստան	67
Ռուսաստան	68
Ուկրաինա	74
Թուրքիա	75
Մակեդոնիա	80
Ղազախստան	85
Մոլդովա	86
Տաջիկստան	91
Հայաստան	**94**
Ղրղզստան	104
Ադրբեջան	105

Հայաստանի համաշխարհային մրցունակության երկրորդ՝ «Արդյունավետության խթանիչներ» փուլի գնահատականները ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի, 2011-2012թթ. ինդեքս

Աղյուսակ 7.

Երկրներ	Արդյունավետության խթանիչներ
Չեխիա	29
Լեհաստան	30
Էստոնիա	36
Հունգարիա	42
Սլովակիա	44
Լիտվա	48
Սլովենիա	51
Թուրքիա	52
Լատվիա	54
Ռուսաստան	55
Բուլղարիա	59
Ռումինիա	62
Մոնտենեգրո	63
Խորվաթիա	72
Ուկրաինա	74
Ղազախստան	76
Ադրբեջան	77
Ալբանիա	82
Մակեդոնիա	87
Իրան	88
Վրաստան	89
Սերբիա	90
Հայաստան	91
Բոսնիա-Հերց.	102
Մոլդովա	103
Ղրղզստան	115
Տաջիկստան	118

Երկրներ	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում
Սլովենիա	21
Էստոնիա	23
Լիտվա	26
Չեխիա	30
Լեհաստան	31
Լատվիա	34
Հունգարիա	45
Մոնտենեգրո	48
Ուկրաինա	51
Ռուսաստան	52
Սլովակիա	53
Ռումինիա	55
Խորվաթիա	56
Ղազախստան	65
Բուլղարիա	70
Թուրքիա	74
Ադրբեջան	75
Հայաստան	76
Մակեդոնիա	80
Սերբիա	81
Ալբանիա	82
Մոլդովա	83
Բոսնիա-Հերց.	86
Վրաստան	88
Իրան	89
Ղրղզստան	92
Տաջիկստան	96

Երկրներ	Ապրանքային շուկայի արդյունավետություն
Էստոնիա	29
Չեխիա	36
Մոնտենեգրո	39
Ալբանիա	43
Թուրքիա	47
Սլովենիա	48
Սլովակիա	51
Լեհաստան	52
Հունգարիա	55
Լատվիա	60
Մակեդոնիա	63
Լիտվա	64
Վրաստան	74
Ադրբեջան	79
Բուլղարիա	86
Ղազախստան	87
Ռումինիա	96
Մոլդովա	98
Իրան	103
Հայաստան	108
Խորվաթիա	114
Բոսնիա-Հերց.	115
Տաջիկստան	117
Ղրղզստան	119
Ռուսաստան	128
Ուկրաինա	129
Սերբիա	132

Երկրներ	Աշխատուժի շուկայի արդյունավետություն
Ադրբեջան	14
Էստոնիա	16
Ղազախստան	21
Վրաստան	32
Հայաստան	34
Չեխիա	42
Մոնտենեգրո	45
Լատվիա	47
Ալբանիա	49
Ղրղզստան	53
Լիտվա	54
Բուլղարիա	56
Լեհաստան	58
Սլովակիա	59
Ուկրաինա	61
Ռուսաստան	65
Հունգարիա	66
Տաջիկստան	71
Մակեդոնիա	72
Մոլդովա	75
Բոսնիա-Հերց.	85
Ռումինիա	92
Սլովենիա	102
Սերբիա	112
Խորվաթիա	116
Թուրքիա	133
Իրան	139

Երկրներ	Ֆինանսական շուկայի զարգացվածություն
Լեհաստան	34
Մոնտենեգրո	35
Էստոնիա	41
Սլովակիա	47
Չեխիա	53
Թուրքիա	55
Լատվիա	60
Հունգարիա	63
Բուլղարիա	75
Մակեդոնիա	82
Ռումինիա	84
Խորվաթիա	87
Լիտվա	89
Ադրբեջան	94
Հայաստան	95
Սերբիա	96
Վրաստան	99
Սլովենիա	102
Մոլդովա	105
Ալբանիա	107
Ղրղզստան	113
Ուկրաինա	116
Տաջիկստան	119
Ղազախստան	121
Իրան	123
Բոսնիա-Հերց.	124
Ռուսաստան	127

Երկրներ	Տեխնոլոգիական պատրաստվածություն
Էստոնիա	27
Չեխիա	31
Սլովենիա	32
Լիտվա	34
Հունգարիա	36
Սլովակիա	37
Խորվաթիա	38
Լատվիա	46
Լեհաստան	48
Բուլղարիա	50
Մոնտենեգրո	53
Թուրքիա	55
Ռումինիա	60
Ալբանիա	62
Մակեդոնիա	67
Ռուսաստան	68
Սերբիա	71
Բոսնիա-Հերց.	73
Ադրբեջան	74
Մոլդովա	78
Ուկրաինա	82
Ղազախստան	87
Հայաստան	88
Վրաստան	100
Իրան	104
Տաջիկստան	116
Ղրղզստան	131

Երկրներ	Շուկայի չափը
Ռուսաստան	8
Թուրքիա	17
Լեհաստան	20
Իրան	21
Ուկրաինա	38
Չեխիա	40
Ռումինիա	44
Հունգարիա	52
Ղազախստան	55
Սլովակիա	58
Բուլղարիա	64
Սերբիա	70
Խորվաթիա	72
Ադրբեջան	75
Լիտվա	79
Սլովենիա	80
Լատվիա	95
Բոսնիա-Հերց.	97
Էստոնիա	100
Ալբանիա	101
Վրաստան	106
Մակեդոնիա	107
Հայաստան	115
Ղրղզստան	118
Տաջիկստան	119
Մոլդովա	122
Մոնտենեգրո	130

Հայաստանի համաշխարհային մրցունակության երրորդ՝ «Նորամուծություններ և կատարելագործման խթանիչներ» փուլի գնահատականները ըստ համաշխարհային տնտեսական համաժողովի, 2011-2012թթ. ինդեքս

Աղյուսակ 8.

Երկրներ	Նորամուծություններ և կատարելագործման խթանիչներ
Չեխիա	32
Էստոնիա	37
Սլովենիա	45
Լիտվա	50
Հունգարիա	52
Լեհաստան	57
Թուրքիա	58
Մոնտենեգրո	59
Լատվիա	64
Ադրբեջան	67
Սլովակիա	71
Խորվաթիա	82
Իրան	83
Ուկրաինա	93
Բուլղարիա	96
Ռուսաստան	97
Ռումինիա	99
Տաջիկստան	100
Ալբանիա	102
Մակեդոնիա	104
Բոսնիա-Հերց.	108
Հայաստան	110
Ղազախստան	114
Վրաստան	117
Սերբիա	118
Մոլդովա	127
Ղրղզստան	138

Երկրներ	Գործարարության զարգացածությունը
Չեխիա	36
Սլովենիա	49
Էստոնիա	53
Լիտվա	54
Թուրքիա	58
Լեհաստան	60
Սլովակիա	63
Հունգարիա	69
Մոնտենեգրո	70
Լատվիա	71
Ադրբեջան	73
Ալբանիա	78
Խորվաթիա	88
Իրան	92
Բուլղարիա	96
Ռումինիա	102
Ուկրաինա	103
Մակեդոնիա	105
Հայաստան	107
Բոսնիա-Հերց.	108
Ղազախստան	109
Վրաստան	110
Տաջիկստան	112
Ռուսաստան	114
Մոլդովա	117
Ղրղզստան	127
Սերբիա	130

Երկրներ	Նորամուծություններ
Էստոնիա	30
Չեխիա	33
Հունգարիա	34
Սլովենիա	40
Լիտվա	48
Մոնտենեգրո	50
Լեհաստան	58
Լատվիա	59
Ադրբեջան	60
Թուրքիա	69
Իրան	70
Ռուսաստան	71
Ուկրաինա	74
Խորվաթիա	76
Տաջիկստան	83
Բուլղարիա	93
Ռումինիա	95
Սլովակիա	96
Սերբիա	97
Բոսնիա-Հերց.	104
Մակեդոնիա	105
Հայաստան	112
Ղազախստան	116
Վրաստան	118
Ալբանիա	123
Մոլդովա	128
Ղրղզստան	141